

1999

ԵՐԻ


ԸՐԱԿՈՒՍ

ԵՐԳԵՐ




ՀԵՆ
599

ԹԻՑԻՒՄ
ԵԼԵՅՐԱՎԱՐԴ ՏՈՒՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7.
1907 (36)



EUL

ԸՄԲՈՒՏ ԵՐԳԵՐ



1913.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

ԵԼԵՔՏՐԱԿԱՐԺ ՑՈՎՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱԽԵԱՆ ՊՈԼԻՏԵԱԿԻ, 7

1907

(36)

2P. 600

4 598.60

ՎԵԴ

ԸՄԲՈՍՏ ԵՐԳԵՐ

Այս գրքոյիկի մէջ զետեղւած բանաստեղծութիւնների
մէծագոյն մասը տպագրւած են Թիֆլիսում լոյս տեսնող
„Կեանք“ և „Զայն“ շաբաթամերթերի մէջ, իսկ մի մասը
տպագրւում է առաջին անգամ:

ԷՄԻԼ

✓ Հ Ն Կ Ա Ծ Ն Ե Ր Ի Ն

Ես ծեղ եմ երգում, սուրբ մարտիրոսներ,
Որ խուլ զիշերին լուսաշահն առած,
Ալայաք հանդէպ ծաղող նոր այգին.
Եւ ընկառ հպարտ թե թեփ տւած,
Ժպիտն երեսին, յուսերով վառւած:
Զեր յաւերժ լռած սուրբ շիրիմներին
Պատիւ մեծարանք, որ կոյր սմբովին
Աւսուցիք ատել՝ բռնութիւն; կապանք
Եւ ամբողջ թափով սիրել ազատ կեանք:
Զեր յիշատակին միշտ յաւերժ յարգանք,
Որ մեղ ուսուցիք սեղմւած շարքերով
Բմբոստ, համարձակ յառաջ արշաւել
Եւ ազատութեան նորածին կուռքին
Դեռաբոյս կեանքեր անահ զոհ բերել:
Ես ծեղ եմ երգում, սուրբ մարտիրոսներ,
Որ մութ զիշերին լուսաշահն առած,
Հանդէպ վաղեցիք ծաղող նոր այգին
Եւ ընկառ հպարտ, մեղ տալով աւանդ
Նա կառլրի միայն, ով զոհ կաաք շատ:



ԱՆՏԱՌԻ ԿՈՉԲ

Նողմը սաստկացաւ, շտապի՛ր, ընկեր,
 Մօտ է փոթորիկ, գնանք դէպ առաջ:
 Եւ անսիրտ երկինք մոնչեց, գոռաց,
 Հրեղէն շանթեր ամեն կողմ տեղաց:
 Եւ սե ամպերից տարափ սկաւեց,
 Մի անսիրտ տարափ, կարմիր-ծով տարափ:
 Հողմի, շանթերի ահեղ որոտից
 Վիրաւոր երկիրն հառաչեց, տնքաց:
 Հնչեց աշխարանք, սե սուդ ու շիւան,
 Ամեն տեղ տիրեց արհաւիրք մահւան:
 Արիւն արցունքում կեանքը խեղաւեց,
 Աշխատաւորի լուց ըմբոստ երդ:
 Ահեղ փոթորիկ մահացու թափից
 Ճչաց անտառը ցաւու հառաչով.
 Հզօր ճառերը զայրովթով լցւած,
 Ջարդւած նղներով ընկան դէպի ցած:
 Որբ տերեները քամու բերանին
 Թռան, սլացան ձայրերն աշխարհին.
 Դռուող փոթորիկ գանգատն են անում,
 Ծլող սերնդին վրէմի է կանչում:
 Նորածիլ անտառն լսեց ու ցնցւեց,
 Յաղթական ձայնով կուի կոչ արեց—

Ամեն ձայրերից եկե՛ք միանանք,
 Գնանք դէպ յառաջ խիտ-խիտ շարքերով:
 Մենք թարմ ենք, ճկուն, կուից չենք սարսի.
 Մենք շեշտ բողոք ենք մեր ընկածների:
 || Գոչենք փոթորիկն—էլ դու չես՝ յաղթի
 Գուցէ մեղ թերես, բայց չես խորտակի:



Յ. Ա. Ռ. Ա. Զ.

Նաղսոն

Գինա դէպ առաջ, տանջանք մոռացիր,
 Փոթորկի հանդէպ զու մի ընկճւիր:
 Կուիր ծագելիք նոր լոյսի համար,
 Որ փայլ արձակեց դիշերում խաւար:
 Աշխատիր քանի զօրեղ են կոներ,
 Եւ մի կորցրու ոսկեվառ յոյսեր:
 Յանուն զիտութեան և վառ լոյսի զու
 Պարզիր քո աղնիւ կերոն լուսատու:
 Եւ թող քեզ պատժեն, ցոյց տալով զգւանք,
 Թող թափէ վրադ անմիտ անարդանք
 Կատղած ամբոխի կանխահաս վճիռ.
 Գինա քո շաւզով, զու մի վհատիր:
 Ծանրատար կեանքի ամեն փոթորկին
 Մատաղնաս կուրծքի վստահ զու դէմ դիլ
 Զարթեցրու խորը մթնում քնածին,
 Օգնութեան ձեռք առնը անոյժ ընկածին.
 Եւ բարձր խօսքը վեհ նշմարատութեան,
 Ինչպէս կենդան լոյս, ծաղիր ամբոխին:



Ա. Մ Բ Ո Խ Ի Ն

Մահապարաներն անթիւ խաչերից,
 Բոնութեան գործիք—կախաղաններից
 Եւ բանտի մաշող տանջարաններից
 Նզովում են ձեղ, անէծք են ժայթքում—
 Նզովք ու անէծք թուլամորթներին,
 Անհող ու փարթամ կեանքի նորաերին:
 Ամօթ, նախատինք կասկածուներին,
 Որ շուտ ուրացան քաշ կուողներին:
 Մեզ առաջ նեսողն՝ ձեր լուռ տանջանքն էր,
 Մեզ աշխարհ ճնողն՝ ձեր անզօր բողոք,
 Մենք թարգման դարձանք ձեր վառ ըղձերին—
 Իրադորձողներ երազ յոյսերի:
 Եւ դուք օրհնեցիք մեր ձանր ուղին,
 Խոստացաք թե տալ մեր լմբոստ խաղին.
 Ձեր սէրը եղաւ մեղ վեհ քաշալեր,
 Ձեր տւած խոստում—մարտի հրաւէր:
 Սակայն երբ յանկարձ նոր ծաղող այդին
 Արագ յաշորդեց չարազոյժ խաւար,
 Երբ կարմիր արև մտաւ ամպի տակ,
 Նորից ձագերու աւելի պայծառ,
 Դուք վհատ սրաով յետ նահանջեցիք
 Եւ որպէս խխունչ մահից ահարեկ

ԽԵցիների մէջ լուռ կծկւեցիք:
 Եւ այժմ ահա քո թարմ ոյժերը
 Ճօնւում են անարդ կախաղաններում,
 Սիրովդ վառւած ուազմիկները
 Փչել են շունչը բարդիկաղներում,
 Բնտիր ոյժի ըիդ մարափկ շարքերը
 Գամւած են սիւնին նշաւակութեան,
 Նրանց նահաստակ սուրբ նշխարիները
 Դեռ ենթարկւում են պիղծ անպատութեան:
 Ամօթ, նախատինք յուսահասներին,
 Մահ ու կախաղան դաւաճաններին,
 Որ չշանացին բորբոքւած պահել
 Վառ լուսաչահը վեհ աղատութեան:




✓ ԿՌԻՈՂՆԵՐԻՑ — ԶՈՒԿԱԾՆԵՐԻՆ

Մենք գալիս ենք ձեր կարմիր հետքերով,
 Ձեր թափած արեան ալ-վարդ շաւիզով:
 Դուք մեռաք խիղախ, ծիծաղկոտ, հպարտ,
 Գերեղման մտաք անկախ ու աղատ:
 Իսկ մենք գեռ ստրուկ, շղթայւած գերի,
 Վարւում ենք աքսոր-խորքերն Սիրիի.
 Մեր թարմ շարքերը իրանց գերեղման
 Գտնում են խորքում խոնաւ բանաերի:
 Դեռ ակրող օրէնք — սուրն է ու մտրակ,
 Դեռ մեղ լափում է բռնութեան կրակ:
 Մեծ ոճրագործ լիտի, անամօթ
 Դեռ յօշուում է իր գոհն արիւնոտ:
 Ել բաւ է արդէն. ձեր գալրոյթն անշէջ
 Ահեղ չափերով բռնկւեց մեր մէջ:
 Մենք գալիս ենք ձեր սուրբ շաւիզներով,
 Ձեր թերի բղձերն փութով կատարել —,
 Բռնութեան կապանք խորապեկ, փշրել
 Եւ տանչւած երկրին նոր կեանք պարզել:
 Այս է մեր վճիռ — յառաջ անձներ,
 Կրկին վերադարձ չունի մեր ուղին,
 Մեղ արգելում են — ձեր սուրբ շիրիմներ:

✓ ՍԹԱ.ՓԻԱԾ ԲԱՆԿՈՐԸ

Նկայ տիտանը զարթել է քնից,
Շարժւում է առաջ որպէս մի տոիւծ:
Բանտ ու կախաղան, մտրակի հարւած
Արդէն անոյժ են, ովք մեծ բռնաւոր,
Կանգնեցնել այդ վեհ յաղթական գնացք,
Քնով թարմացած, նա ոյժ ստացած,
Հմբոստ, յանդուզն առաջ է նետւում:
Գալիս է շանթել իր դահիճներին,
Պատուել սև դիմակ ոճրադորձների
Եւ որպէս փրէժ տւած զոհերի—
Զարդել, տրորել նենդ բռնաւորին:
Դէհ յետ նահանչէք, բանւորն է դալիս:
Ճանապարհ տւէք, զրկւածն է դալիս:
Այժմ նրանն է ոյժ և իրաւունք,
Դէհ ծունկ չոքեցէք հսկան է դալիս:



✓ ԲԱՆԿՈՐԻ ԵՐԳԵՐԻՑ

Երբ դառան նման մենք խոնարհ էինք,
Մեզ խուզում էին մեր բռնաւորներ:
Երբ ոյժ ծեռք բերինք, տախմներ դարձանք,
Մեր դէմ հանեցին գաղան հրէշներ
Փամփուշտ, կախաղան, ալթնէ մարակ
Պաշտպան հանեցին գահի բռնութեան.
Հոսող արիւնի ծով-տարափի տակ
Խեղտել ուզեցին թափն ազատութեան:
Մենք չենք սարսափում մարակից, սրից,
Մենք չենք դադարի կոխւ մղելուց.
Եւ մահւան հանդէպ անահ կդռչենք—
Կորչի՛ բռնութիւն, կեցցէ՛ յաղթութիւն:



✓ ՄՇԱԿՆ ԱՐԺԱՆԻ Է ՎԱՐՉԻ

Թշւառ, հալածւած, մոռայւած ընկեր.
 Կիսամեռ ընկած անբախտ հայ քանւո՞ր.
 Լսո՞ւմ ես ձայներ գործարաններում.
 Լսո՞ւմ ես նոյն ձայն շէն ու գիւղերու մ:
 Սև հարիւրեակն է արդեօք չարդ կազմում:
 Թէ անգութ կօզակ գիւղերդ այրո՞ւմ:
 Գուցէ բանւորի ճամբին նայելով,
 Սովատանց կանայք մեռնում են լալով:
 Ուշ գի՞ր, լաւ լսիր, ծանօթ են ձայներ.
 Քեզ նման վատոյժ վախչուա ընկերներ
 Զարթել են քնից, այնան են վազում,
 Կաղմում են խմբեր, տիրում է շարժում:
 Տապարի ծայնը աշխարհ է առել,
 Կուանի հարւած իրար խառնւել:
 Խորտակւած սալլիդ անիւն են շինում,
 Զաղախւած մարմնիդ կեանք տալ են ուզում:
 Ել ի՞նչ ես նիրհում, շուտ ոտքի ելի՞ր,
 Հզօր կոներիդ կուռ շղթան փշրի՞ր,
 Այդ բեկորներից կուած դուր, ուրագ,
 Զեռդ առ շուտով, հասի՞ր տեղ արագ:
 Գուցէ ուժերդ այնտեղ սպառես,
 Գուցէ շինելիս հողիդ ել փչես,
 Սական նրա մէջ ձագերդ, ընտանիդ
 Արիւն, կրակից ընդմիշտ կաղատես:



19/2.

ՀՈՒԾԻՈՂ ԴԻԱԿԻՆ

Փաջ գիտացի՞ր, լուծւող գիակ,
 Զե՞նք նահանջի յե՞տ: Երբէ՞ք:
 Արնով գնած ամեն մեր քայլ
 Մահով միայն յետ կտանք:
 Քո կախաղան—մեր մարզարան,
 Քո բանտերլ—մեր վարժարան,
 Քո դատարան—մեր ամբիոն,
 Քո Սիրիրլ—մեր սուրբ Սիօն:
 Մենք վախ չունենք սարսափներից,
 Ահը կորաւ մեր սրտից—
 Աղասի մեռնել կուի դաշտում—
 Այս է միակ մեր ձգտում:
 Այս ենք երդում, այս ենք դոչում
 Մեռնողներս անլքում:
 Փաջ գիտացի՞ր, լուծւող գիակ,
 Որքան թափես գետեր արեան,
 Որքան գոհերն մեր բաղմանան,
 Այնքան արագ դու փորում ես
 Քո սեադհական գերեզման:



Ծ Ո Վ Ի Վ Ր Ա



Բ—Ա-ին

ուսնեակ զով գիշեր։ Ծփում էր նաև ակ
չեղիկ ու խաղաղ ծովում անխատակ։
Մենք եր գում էինք պաշտելի տաղեր,
Մեզ լսում էին լուսին ու աստղեր։
Բայց ահա յանկարծ մեր ուրախ երդին
Խող խող մռունչներ արձագանք տւին...
Այն ծովն էր հեռուում սկսում իր խաղ.
Մենք չսարսեցինք, երդեցինք անահ,
Էւ մենք զգացինք, ինչպէս մի առիւժ,
Մեզմ նիրհող ծովը կատաղեց քամուց.
Խառնեցան սարերք, փրփրեցին ալիք
Ու մեր թող նաւակ արին խաղալիք։
Այլպէս էլ ահա և մեր կեանքի մէջ
Սև փոթորիկներ խոճուում են անվերջ,
Երդենք միշտ անահ երդեր յաղթական,
Անվիատ կուենք, քանի ոչժեր կան։



✓ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԶԵՆ ՄԵՌՆՈՒՄ

Հընւեցէր, խղճուկ, վարժկան դահիճներ,
Սփուելով ձեր շուրջ անվերջ դիակներ,
Եւ դու, թագակիր արիւնոտ վամպիր,
Օրը հարիւրով դիակներ լավիր.
Բայց նրանց հետքեր իսպառ չեն կորչում
Եւ հերոսները երբէք չեն մեռնում
Ամեն մի կաթիլ թափած արիւնի
Ծնունդ է տալիս ոի նոր կորիւնի.
Արիւնը՝ որպէս հզօր բաղասան,
Որպէս նոր կեանքի հեղուկ սրբազան,
Կուող շարքերին ողի է շնչում,
Եւ հերոսները երբէք չեն մեռնում:
Եւ ուր արիւնը հոսում է առատ,
Այնտեղ նոր դործ կայ—կոիւ անվիատ։
Ընկնողին յաջրդ՝ կանգնում էն նորեր,
Մինչև փշրւեն քո կուռ շղթաներ։
Ուրեմն հոսէ թող արիւն առատ,
Մինչև կծաղէ նոր օրը աղատ։
Հմբոստ մարտիկներն արնից չեն սարսում,
Վեհ հերոսները երբէք չեն մեռնում։



Պ Ա Տ Ա Ն Ո Ւ Խ


Լերան ծերպից ջուր էր վաղում
Քաղցր, վճիտ անսապակ.
Ժայռու լանչից ցած էր հոսում,
Փրփրալով ու արագ:
Նա թռչում էր անվերջ առաջ,
Հանդիսատ, դադար չէր փնտում,
Նա կայտառ էր, հանում կարկաչ,
Նրա երզը չէր լուսում.
Եւ նա այսպէս մինչև ներքեւ
Հմբոստ հասաւ ու երդեց,
Մուժ ծորերում, լուռ դաշտերում:
Տիրող անդորր խանդարից:

Այսպէս և դու, ժիր պատանի',
Եղի՛ր մաքուր, անարատ,
Անձեղ կրծքումդ թող խոխոչի
Կեանքի աղբիւր յորդառատ:
Միշտ պացի՛ր դէպի առաջ,
Աղբիւրը քեզ օրինակ.
Քեզ չննշէ լաց ու հառաչ.
Երդի՛ր վստահ, համարձակ:
Եւ քո երզի արձագանքից
Սարեր, ծորեր թող թնդան
Եւ մահացնող խոր թմբանքից
Սարուկ դոհերն արթնանան:

Ա Ր Ծ Ի Խ

Դու բուն ես զրել ժայռի կատարին,
Ազատ մեծացնում քո քաջ ճտերին:
Փախել ես մարդոց անդութ կատանքից,
Արձակ ապրում ես հեռու տանչանքից:
Թելերիդ մեծ ոյժ հողմերն են բաշխել,
Աչերդ՝ հսւը կայծտկից խլել,
Ահեղ մազիլքդ, մտնդաղ կառոցդ
Սուր՝ սուր քարերն են սնխնալ սրել:
Հպարտ նայում ես լերան բարձունքից,
Գիւնս—վախ չկայ հեռու ներքելից—
Հրճւում ես, նախրում, գիսես—ազատ ես.
Եւ մարդոց նման սարուկ, կապրած չես:
Եւ այդպէս դու, որ թանգ ես զին դնում
Ազատ կեանքը ու այդպէս հրճւում,
Ինչո՞ւ քեզանից անզօր թռչնակի
Սուր մազիներովդ առնում ես հողին:
Նա ի՞նչ մեղ ունի, որ թոյլ է ծնւել.
Եթերում քեզ պէս ազատ չէ մնւել.
Միթէ իրաւունք չունի թռչնակը
Քեզ պէս խնամել սիրուն ծաղիկը:
Գիտեմ, մեղ կասես—ապրել եմ ուզում,
Ճաերս քաղցից վերեն են նեղում,
Եթէ մազիներս արնով չւանամ,
Ո՞րտեղից սաշար գտնել կարենամ:
Ահա՛ քեզ ճարակ ցոյց սանք համարձակ.

ՀԱՐՁԵԱԼ ԳԱՐՈՒՆ



արձեալ նոր դարուն: Դարձեալ երկիր
հեղիկ դարմում է ձմբան խոր քնից:
իր սառոյց-շղթան վշրել է չուրը,
Ռւրախ քըրիչով իշնում է ու րից:
Ծագեց արշա ոյս: Նրա վառ ժպտից
Կարմրեց վարդը, կանաչեց արօս.
Եւ սիրաբորբոք սոխակը թփից

Աւետում է նոր կեանքի առաւօտ:

Բայց դեռ քնում է իմ սիրսւն աշխարհ,
Խոր մահւան քնով առնում է դադար.
Կեանքի նշոյներ, դարուն վրկարար,
Դեռ չեն երևում, աիրում է խաւար:
Սառնամանիքը դաժան հիւսիսի
Դեռ կաշկանդում է հայրենի աշխարհ.
Դեռ նա հմլում է անուշ մալիսի
Նորածիլ բոյսեր, կանաչը դալար:

Սլացիր, հասիր դու նրան արադ,
Անտեղ ափում է մի չար բոնաւոր,
Չարիք չժողեց, արեց բիւրաւոր.
Իր որդիներին արեան մէջ խեղդեց,
Ընաիր ոյժերին կախաղան հանեց,
Երկիրը դարձրեց հսկայ դամբարան,
Ռւր միայն գոյժեր լսուում են մահւան:
Նա է քո պաշար: Թոյլի տեղ արձիւ,
Բռնակալ ոյժի դէմ լարիր կոխւ:
Խրիր մաղկներդ անսրդի կուրծքը,
Կեռ կառցովկ գուրս հանիր թոքը:
Լւա ճանկերդ այս օձի արնով,
Յօշոտիր նրան մտա մաս դու շուտով:
Փրկիր նրանից տանջանքի աշխարհ.
Փշրիր դու նրա սւինն ու տապար:
Դէհ, ուղմի թռչուն, սլացիր շուտով,
Մենք քեզ օգնութեան կհասնենք փութով:
Թէ թիկունք կոտանք քեզ անեղ կուրին,
Զէնք թողնի մէնակ մէր հուժկու արձւին:
Բայց եթէ այս ուխա թողնենք անկոտար,
Փախուստ տանք կուրից՝ որպէս մի վառթալ,
Պատոփիր մէր կուրծք ամենից առաջ.
Մեր սիրա ու թոքեր լինի քեզ պաշար:
Լաւ է, կացիկ տակ արիւնքամ ընկնենք,
Քան ուխտ զրժողի անուն վաստակենք:



* * *

Լսում եմ վերջին հեռոյն երկրի:
 Արիւնոտ, տանջւած հաղիւ է շնչում:
 Թարմ շիրիմների սրբաղան շարքերն
 Նրա յօշուած սև կուրծքն են ճնշում:
 Եւ որպէս հսկայ մի գերեզմանոց
 Նոր կեանքը թաղւած՝ բռնաւոր ոյժից,
 Մանր տնքում է արձանների տակ,
 Զապելով առ ժամ կոիւն բացարձակ:
 Եւ արիւն ծարաւ, վարձւած դահիճներ,
 Կատաղի տենչով, որպէս գամփոներ,
 Արթոն հսկում են այդ շիրիմներին,
 Որ թաղւած կեանքերն յարութիւն չառնեն:
 Ո՞հ ի՞նչ զուր պատրանք, կեղծ խարէութիւն,
 Դահիճների մէջ վնասել փրկութիւն:
 Մօս է օրը, երբ այդ շիրիմներում
 Զսպւած նոր ոյժեր մի ակնթարթում,
 Որպէս հրաբուզն, հուր, բոց կժայթքեն.
 Կիշրեն կապանք, քար ու մահարձան,
 Քարուքանդ կանեն այդ մեծ գամբարան.
 Եւ աւերանքի ժեռ կոյաերի տակ
 Գարշ դահիճների կթաղեն դիակ,
 Աղատ տօնելով տարած յաղթանակ:



Ա Ս Տ Ի Ա Ծ

(Եւգ. Էպի)

Ա ստուժոյ սուրբ տաճարում
 Մեղ ասացին—Նա յարեաւ:
 Եւ մենք կանդնած անմռունչ,
 Հրաշք էինք սպասում:
 Եւ թւում էր՝ լիք տաճարն
 Կանդ է առել, չէ շնչում—
 Նա այստեղ է, կը լսի,
 Նա մեղ շուտով կերեի:
 Կբարձրանալ սանդիստով,
 Հեալ անթիւ հրեշտակներ,
 Մտերի պէս կվորէն
 Բանաի գաժան կապանքներ,
 Աղատութիւն կիչէ
 Որպէս գարուն տենչալի,
 Եւ մեղ կարմիր կներկէ
 Այդ ալիքով յանկալի:
 Աղատութեան տենչերով
 Մենք բոլորս համակւած,
 Աղասեցինք անհամբեր
 Մինչև խորը կէս զիշեր:
 Շատ էինք մենք: Բաղմաթիւ:
 Եւ մեր ամբոխ խոնւած,
 Իր յարուցեալ Աստծուն,

Ապասում էր վշտացած:
 Մենք խիստ էինք ձանձրացել
 Եռայլ, դաժան բանտումը,
 Մեր շարքերը վիստացին
 Գորշին ապօվ մթնումը:
 Սահում էին վարկեաններ.
 Կանզնել էինք և լոռմ
 Ու հրաշքի սպասում:
 Բայց յարութիւն առնողը
 Աւազ զեռ չէր յագտնում:
 Մի խուլ տրտունչ սլացաւ
 Մեր գորշագոյն շարքերում:
 Սարսափ տիրեց ամենիս,
 Լուեց մի խուլ հառաչանք.
 Ինչոր մէկը խիստ յոդնած—
 «Ուր է Աստւած», հարց աւեց:
 Բուրվառների զօղանջիւն
 Մեր սարսափին էր մեծացնում,
 Փայլում էին մոմերը
 Մեր դողդոջիւն ձեռներում:
 «Բայց ուր է նա», անսփոփ
 Թախմում էինք, մտածում:
 Եւ բանախց մութ այդ խոհեր
 Մեղ այս էին շշնչում—
 «Էլ հրաշքի միք սպասիլ...
 Զեղ խարել են քրմերը,
 Նա յարութիւն չի առել»:

Եւ այնուհետ մեղ նորից
 Դէպի բանտը վարեցին:
 Եւ մենք աղօա յոյսերով
 Պատուհանին մօտեցանք:
 Երկար, երկար այնտեղից
 Նայում էինք վրդովլած:
 Այնտեղ մութն էր ու մուայլ,
 Այնտեղ չկար էլ Աստւած:




ԱՇՆԱՆ ՕՐԵԹԻՆ

Երկինքը գունատ: Արևն ամաչկոտ:
 Լոյսի վառ շողերն—նւաղ ու վախկոտ:
 Գիշերներ երկար, սկսու ու խաւար,
 Բերում են թափիծ, տանջանք անհամար:
 Մահաշունչ քամին—սառը, դժնդակ:
 Բնութիւն-լացկոտ, անշուք, որբ, մէնակ:
 Երկիրն-սղաւոր, վշտերի հովիտ,
 Մարդկանց դէմքերին սառել է ժպիտ.
 Եւ օրը-թղպոտ, դժգոյն ու ծնշող,
 Անցնում է գտանդաղ, սրտեր քայլալող.
 Օղը-ծանր: Թոյն: Զուրկ թարմութիւնից,
 Խեղգւում են մարդիկ նրա զարշ հոտից:
 Դէհ, ուր ես, գարնան ահեղ փոթորիկ,
 Պայլթեցրու որոտ, շանթառատ կայծակ,
 Անձրեի տարափ թափի՞ր յորդարատ.
 Ողողի՞ր, շանթի՞ր կեանքը ցաւազար:
 Օղի նոր հոսանք առուր մեղի առատ,
 Թարմացած կրծքով շունչ առնենք աղատ,
 Կաղբուրենք ոյժեր, նոր կոխւ մղենք,
 Նանթիդ պէս ըմբոստ ցնցենք ու շանթենք:



ԱՐԹՆԱՑԱԾ ԿԵՍՆՔԸ



Դու ցանկանում ես, որ լամ,
 արտասւեմ.
 Գահոյքիդ առաջ մուրամ,
 աղերսէմ.
 Դու կամենում ես—որպէս թոյլ նինու—
 Պիղծ ոտքերիդ տակ քծնէմ ու սողմամ.
 Բոնի ուժիցդ սարսեմ ու դողամ,
 Եւ կամ շնորհիդ մեղք փշրանքներով
 Վշտերս մեղմէմ, բաւական մնամ:
 Ոչ: Ես ըմբոստ եմ, անզուսակ ու հպարտ:
 Ես չեմ աղերսում, այլ պահանջում եմ—
 Յետ տուր իմ զրկանք, իմ թանգ կորուստներ,
 Իմ անկախ օրեր, արիւնոտ զոհեր:
 Կամ ողջ—բոլորը, կամ ոչինչ երբէ՞ք:
 Ես չեմ այլ ևս սարուկ վշտաբեկ:
 Ես նոր արթնացած կեանքն եմ քաշարի,
 Հսկալ ախտանն եմ—ահեղ, վիթխարի.
 Իմ յաղթ ընթացքին ով չի խոնարհւի,
 Անիւներիս տակ չախչախւած կընկնի:



Թ Ա Ղ Ո Ւ Մ

(Նաղսոն)

Ասում ես գետի այն կողմը—դիւզում,
Նիրհող գաշտերի լոռւթեան միջին,
Հնչում է թաղման մի խուզ զօղտնչիւն:
Ահեղ, չափաւոր դանդի հարւածներ
Խեղդւում են հեռւում, ուր երեկոյեան
Վառ ճանանչները փայտում են, վառւում:
Լսում ես ձայնը թաղման երգերի.
Դա համբերութեան, դործի առաքեալ—
Մի ազնիւ մշակ է այնտեղ մարել...
Երկար ընթացաւ նա դործի ուղիով.
Երկար մայր-երկրին, խիստ վրդովմուճով:
Ջրում էր իրա արիւնը բարինքով:
Այրում էր նրան կէսօրն իր ասալով,
Քամին սառցնում իր պաղ պաղ շնչով,
Ամպն էլ թաց անում իր յորդ անձրեսով.
Բուքն ու բորանը խրնիթն էր ծածկում
Եւ աշխատանքով բուսցրած հունծն արտում,
Կարկուտն էր սուէպ ձեժում, հարւածում:
Իր հզօր հողւով նա շատ համբերեց.
Բաղդի հետ կուել, գեռ մանուկ—սովորեց:
Դէհ ալժմ հողում նա խաղաղ թաղւած,
Թո՞ղ հանդիսան առնէ հոդս ու վրդովից
Այդ համբերութեան և աշխատանքի
Մէծ առաքեալլ մէր հայրենիքի:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Քեզ խաչ հանեցին՝ որպէս սառւթիւն
Նշաւակութեան սիւնին գամեցին:
Քեզ անարգեցին գարշ գահիները,
Կախաղաններում անխիզն խեղզեցին:
Մորթգ քերթեցին սուր ու մկրասով.
Զախւած գիտկդ փողոց նեաեցին.
Քեզ ենթարկեցին խուժանի ծաղրին,
Սպազաստակներն արնովդ ներկեցին:
Քեզ կաշկանդեցին մռայլ բանտերում,
Խոր, մութ շախտերում անդարձ թաղեցին:
Սովի մատնեցին անբայտ վազրերում,
Կորստեան աքսոր—Միբիր վարեցին:
Ամեն աեղ գու ես վիրաւոր, տանջւած,
Համազարկերի առաջ լուռ կանդնած:
Դու ես հաղածւած... փշէ պաակում
Արիւնուս... ընկած բարրիկադներում...
Եւ գու գեռ՝ որպէս անզուսպ ոնբագործ,
Շարունակում ես գատարաններում
Մեղապարտների գերում երեալ:
Թուքն ու անէծքը ամբոխի խաւար
Վճուել ես տանել անխովի... յամառ...

Միթէ չես լսում և դեռ չես սոսկում—
Բիւր նահատակներդ վրէժ են գոչում,
Թարմ շիրիմները բողոք են ժայթքում:
Փէիր, հնչեցրու փող ահեղազոչ
Լսեցրու ծայնդ ուժգու, մահագոչ.
Քանդիր, տապալի՛ր բանտ ու պալատներ,
Վեհ անկախութեան եղի՛ր լուսաբեր:
Զարկ քարայած կարծը կուրծքերին,
Բաղիսի՛ր, խորտակի՛ր ապառաժ սրտեր,
Եւ ստրկութեան փշրի՛ր շղթաներ:



ԿԵ ԱՆՔԻ ԿՈՒԻԼ

(Պ. Եա.)

Այս կեանքս ամբողչ՝ անցնում է մեռած...
Տարւելով կեանքի տղմուտ հոսանքից,
Ցերեկ ու գիշեր կոխւ եմ մղում.
Ինքս ինձ համար գարծել եմ ալժմ—
Եւ բանտ և գահին և խիստ գատաւոր:
Տանջող երադներն— արթուն թէ քնած—
Զեն տալի անծիս ցանկալի հանգիստ.
Ահա տեսնում եմ քաշերին ընկած
Ընդարձակ գաշառում, ահեղ մարտից յետ:
Եւ գիշերը լոիկ՝ վշտերով խոցւած,
Երկը վրայով սահում է անդարձ
Դէպի երկնային անսահմանութիւն,
Ամպերի եաքից նայում է լուսին:
Վայրի սարսափը—մտհւան դալկութիւն...
Վառ դրոշմել է նրա երեսին:
Խաղաղ նիրհում են վեհ մեռածները—
Դէմքերն դէպ երկինք, զանդերն չախչախւած,
Դիերն արիւնոտ և արդէն կապտած:

Նրանց աչքերը նայում են սառած—
 Դիտում են անշարժ, անթարժ, սևեռած:
 Իսկ ես էլ՝ որպէս մի դժգոյն ստւեր,
 Որպէս խօլային համր ուրւական,
 Շրջում եմ այդ լուռ սոսկումի դաշտեր:
 Զգիտեմ, ի՞նչու—ես մեռածներին
 Հաշուում եմ մէկ~մէկ, նայում դէմքերին...
 —ինչ սիրուն դէմքեր: Բոլորն եղբայրներ,
 Սերա բարեկամներ: Բոլորը ծանօթ
 Մաերիմների թանդ դիմագծեր:
 Եւ նրանք բոլորն ընկան անվեհեր,
 Որպէս փայել է այն խիզախներին,
 Որոնց մէջ չկաց ստոր, փարշ մտքեր:
 Նրանց անկաշառ միակ ըղձանքն էր,
 Նրանց գեթ միակ վեհ ցանկութիւնն էր—
 Սիրոյ արեին, սուրբ ազատութեան
 Փութով աեղի տար կոպիտ բռնութիւն:
 Եւ կարծես՝ որպէս դժգոյն մի ստւեր,
 Խոռոշ դիշերային որպէս ուրւական,
 Շրջում եմ ես այդ տիրամած դաշտեր...
 Ո՞հ, լացիք իմ երգ: Բոլորն եղբայր են.
 Սերու բարեկամներ: Բոլորը ծանօթ
 Մաերիմների թանդ դիմագծեր:

Վշտից խենթացած՝ ողբով բարձրածայն
 Ուղում եմ ընկնել սառ գետնի վրա—

Նրան յանձնելու կատաղի զայրոյթս
 Եւ անել վիշտս և անհուն սէրս:
 Եւ երբ կորացած ուղում եմ զրկել
 Տառապածներին—յանկարծ... ո՞հ սաշատի,
 Նրանց անզգայ դէմքին մահացամ,
 Որպէս խոռոշ զիշեր... սև մութը պատեց
 Եւ նրանց անշարժ շրթունքներ լուած
 Ո՞հ գալարւեցան սոսկալի ծաղրից...
 Ինձ սարսուռ տիրեց, զգացի կարծես
 Չարագոյժ շշուկ, խիստ յանդիմանանք—
 «Ուր էիր, երբ մենք արշաւում էինք
 Դէպի ահեղ մարտ—պատրաստ յաղթելու,
 Եւ կամ խիստ յօժար սրտով մեռնելու:
 Ինչու չէ ընկած քո յօշուած դին
 Մեզ հետ—քո մեռած եղբարցդ կողքին:
 Ինչու որպէս զող, մենակ զիշերով
 Մեզ այցելում ես քո զգւանքներով:
 Անվերջ զայրոյթիցդ մեղ ի՞նչ շահ, փրկանք.
 Քո անել վշտից մեղ ի՞նչ սփոփանք:
 Թախծալի երգեր շեշտ երգել զիտես,
 Բայց աղնիւ մահից ո՞հ... դու սոսկում ես:
 Հեռացիք, գնա՛, զգւելի են մեղ
 Քո փոքրոցի արդարացումներ:
 Ուր էիր, երբ մենք դէպի կուամարտ
 Սլանում էինք առանց սարսելու—
 Պատուի ու պարաքի կոչին միշտ հլու:

Դու մեղ լնկեր չես, դնա՛, հեռացի՛ր.
 Քեզ չենք նանաչում, դէ՛հ դնա՛, դարձի՛ր...»
 Եւ ես սլաշալ հեռուն անսահման...
 Սահում էր մեղմով մուալոտ լուսին,
 Վալրի սարսափիր—մահու դալիութիւն
 Վառ գրոշմել էր նրա երեսին:
 Սեղմելով ծեռներս անգօր դառնութեամբ,
 Ես նայում էի երկնակամարին
 Կարծես համոզւած օդնութեան կոչին
 Զայնակցող երկինք կմեղմէ վիշտս,
 Կհանգստացնէ ինձ ալրող դարդս;
 Բայց նա անտարբեր կապտին էր տալիս,
 Նա սառնասիրա էր դէպ սուտն, արդարը
 Դէպ այն բոլորը, ինչոր հրճում է,
 Տիրում բռնանում և ինչոր ուժդին
 Ահեղ փոթորկից թեքւում է, սարսում:
 Աղերս ու անէծք նրան չէր շարժում:
 Ես փախչում էի... Եւ թւում էր ինձ—
 Թշնամին անկայս մահւան դաշտի մէջ
 Քայլ առ քայլ արագ հետևում էր ինձ:
 Նրա նախատինք, բարձր աղաղակ,
 Որպէս սուր դանակ, վերք վերքի եաքից,
 Առանց խղճալու, հասցնում էր ինձ:
 Եւ զուր՝ զթութիւն էի աղերսում:
 Այսպէս ողջ կեանքս անցնում է մեռած.
 Տարւելով կեանքի տղմուտ հոսանքից,

Յերեկ ու զիշեր կռիւ եմ մղում.
 Ինքս ինձ համար դարձել եմ այժմ
 Եւ բանտ ե՛ դահիճ և խիստ դատաւոր,



Ն Ո Ւ -Տ Ա Ր Ի

(1907)

Այս սե օրերին էլ ի՞նչ «նոր-տարի...»
 Քեզ ի՞նչ «նոր-տարի», խնդութիւն, բերկրանք,
 Երբ սոսկ արիւնն է տօնիու զարդարանք:
 Եւ ուրախ երգդ—լաց ու աշխարհանք:
 Էլ ի՞նչ «նոր-բարի», երբ ազատ երգին
 Հրացաններն են արծագանք ապի:
 Երբ ազատ խօսքին դրւած է փականք,
 Վեհ մարտիկների սե բաղդն է կապանք:
 Քեզ ի՞նչ «նոր տարի»—ամենքն են լալիս,
 Ուրախ օր չունենք, սարսափն է գալիս—
 Մահն է ամեն տեղ ազատ սուտառնում,
 Նոր բողբոջ կեանքը օր առաջ մեռնում:
 Սուդ է ամեն տեղ. ծանր թախիծ-սուդ:
 Դեռ չեն մամոռաել թարմ շիրիմներդ
 Դեռ չեն չսրացել վերքեր արիւնուր.
 Դեռ արիւն-ուղին դէպ տանջարաններ
 Տանում է անդարձ բխոր անմեղ զոհեր:
 Քեզ ի՞նչ «նոր տարի» պալատն է հրճում.
 Լոիր, պապանծւիր, երբ ապարանքում
 Կարմիր դահիճն է դեռ պարում, ցնծում:

Մահւան թափօրներ, շղթայի ոռնոց,
 Գարշ դահիճների լսկիրշ քրքռոց.
 Աև կախաղաններ, նորաշէն բանտեր—
 Ահա կաղանդիր օրւայ լնծաներ:

| | | | | |
|-------------------------|---|---|---|----|
| Ընկածներին | . | . | . | 7 |
| Անտառի կոչը | . | . | . | 8 |
| Յառաջ—Նաղսոնից | . | . | . | 10 |
| Ամբոխին | . | . | . | 11 |
| Կուլողներից—զոհւածներին | . | . | . | 13 |
| Սթափւած բանւորը | . | . | . | 14 |
| Բանւորի երգերից | . | . | . | 15 |
| Մշակն արժանի է վարձի | . | . | . | 16 |
| Լուծող դիակին | . | . | . | 17 |
| Հերոսները չեն մեռնում. | . | . | . | 18 |
| Ծովի վրա | . | . | . | 19 |
| Պատանուն | . | . | . | 20 |
| Արձիւ | . | . | . | 21 |
| Դարձեալ գարուն. | . | . | . | 23 |
| * | * | * | * | 24 |
| Աստւած—Եւգ. էկկից | . | . | . | 25 |
| Աշնան օրերին | . | . | . | 28 |
| Արթնացած կեանքը | . | . | . | 29 |
| Թաղում—Նաղսոնից | . | . | . | 30 |
| Ճշմարտութիւն | . | . | . | 31 |
| Վեանքի կոիւը—Պ. եա-ից | . | . | . | 33 |
| Նոր տարի | . | . | . | 36 |

ՀՀ Ազգային գրադարան



NL0323981

